

Ջարմանք, խմբագրութիւնք Բիշպ'ս է թուլ աւել իրեն առանց մի որ և է փաստի վրա հիմնելու հարկանցօրէն դատել մի խնդիր, որը ներկայումս է հայկական լեզուափոխական հարցի ներկայ իրիզիսում ամենաարդիւն ու ամենա-լուրջը 2) Զիւր գործանքը անտեղի է և միանգամայն անհիմն: Ահա թէ ինչու ձեր ակնարկած այդ թերթը անհատական սեփական հրատարակութիւն չէր, որ իրաւունք սեպէիք ձեզ այդպէս դատելու, նա ամբողջ մի սօցիալական լեզու-փոխական կուսակցութեան օրգան էր, որը չէր կառող զանազան եսասէր ան-հատներէ ձեռքում խաղալիք դառնալ 3):

Գիտէք արդեօք ովքեր են այդ «կեղծ» թերթը հրատարակողները 4) նրանք են, որոնց կը պարտի նոյն իսկ այդ կուսակ-ցութեան գոյութիւնը և լեզուափոխական գործը իր բոլոր լաջողութիւններով (!): Այն Լոնդոնում ալ չի հրատարակուում են երկու թերթեր միեւնոյն վերնագրով, ո-րոնց մինը (ձեր «կեղծ» կոչածը) պատ-կանում է ընդհանուր հայ (!?) ժողովը - դին, իսկ միւսը՝ մի անհատի (!?) իբրև սեփական թերթ (!) և այդ անհատը իր բունապետական ու կործանիչ ընթացքով կուսակցութեան պատգամաւորական ընդհանուր ժողովի անդամներէ բացարձակ միաձայնութեամբ այլ ևս ար տաքսւած է 5) յայտարարել կուսակցու-թիւնից, և նա իր ևսականութիւնը, անձնական պատիւը պաշտպանելու հա-մար՝ ձեռնարկում է սորէն նոյն այդ թերթի հրատարակութեան, յայտարարե-լով իրեն միակ օրինաւոր (! օրտէղից) ներկայացուցիչը ձեռնարկեան լեզուափոխ-կան կուսակցութեան: Իսկ թէ նա շա-րունակաբար կը հրատարակէ այդ թեր-թը..... դրա պատճառն այն է, որ Լոն-դոնը մի ազատ տեղէ, ուր ամեն մարդ ինչ ուզէ կարող է անել, և թող անեն.. կեղծիքը պատուել է արդէն 6):

Բայց գիտէք ինչ պատճառներից է յա-ռաջացել բոլոր այդ շփոթութիւնը: Այդ իմանալու համար խորհուրդ կը տալինք ձեզ, նախ քան ազգային ու հասարակա-կան աղիւս, յայտնի գործչների հասցէին ցեխ շարտելը, մանրակրկիտ հետազոտու-թեան ենթարկել այդ կուսակցութեան Լոնդոնում կայացրած պատգամաւորա-կան ընդհանուր ժողովի արդիւնքը, թէ անցեալ ինչ գործեր, ինչ հաշիւներ են քննուել այնտեղ և ինչ դիմակներ պատառուել 7):

Երիտըն

2) Չառ սխալ է ձեր կարծիքը խմբագրու-թիւնը ձեզանից աւելի լաւ տեղեկութիւն ու-նի որ կեղծ էր և դա հաստատու Անգլիական կառավարութիւնը և խափանեց:

3) Մնացելը մի մոռանք ինքնական յայտնի է ապագան յուսալի:

4) Մենք շատ լաւ ճանաչում ենք նրանց անձամբ և կարող ենք բացառել ամեն բան բայց ժամանակը չէ:

5) Սուտ և զրպարտութիւն է:

6) Բայց ինչի շարաւ կեղծը այն Լոնդոնը ազատ տեղ է բայց դատաստանը արդար և հոստաններ չեն կարող ամեն բան անել ինչ-պէս դուք էք կարծում:

7) Մյն մեզ բոլորը յայտնի է և ունինք ժո-ղովի արձանագրութիւնները մեր ձեռքի տակ: Մն. Խմբ.

Մարտի 30-ին դեկտ 96

Յանուն ընդհանրութեան գաղափարի հաճեցէք տեղ առ ձեռնեալ երկուողս Շաւղի մօտիկ համայնելից մի ում:

Պ. Յակովբ Դազարեանի «Ն. Խ. Խ.», № 31-ում տուած լրատարարութիւնը որին կարելի է միայն արհամարել, կա-տարեալ ծիծաղ պատճառեց մեզ, որիչ ոչինչ:

Բայց թէ ինչ անես շատերը ասում են թէ արհամարաբը ծիծաղն ու լուրթիւնը համաձայնութեան նշաններ են, այդ պատճառով և ստիպւած ենք երեւան հանել արտուր իրողութիւնը, որ Յակովբ Դազարեանի իսկական պատկերը հա-նելու նման ցոյց է տալիս այ. Յակովբ Դազարեանը լրատարարում է թէ իրեն Եւրոպա ճանապարհորդած միջոցին թշ-նամի մի քանի ոտոր մարդիկ այլ և այլ գրպարարութիւններից (SIC) գատ, լուր ենք տարածել թէ ինքը սպանուել է և այլն և այլն:

Բայց նախ քան բուն խնդրի վրա խօսելը խոստովանեցէք, պ. Յա-կովբ, որ ես ձեզ հետ անձնական և ոչ մի հաշիւ չունեմ ինչ որդողը հրապա-րակ դուրս գալու համար, եղել է միայն և միայն բարոյական սրբազան պար-տաւորութիւնը:

Հարցնում ենք, պ. Յակովբ ինչու ինչ նպատակով գնացիք Եւրոպա գաղտ-նիքը այդ հարցի մէջն է: Ովքեր ուղար-կեցին ձեզ, ում ծախքով որի փողով գը-նացիք, եթէ իսկապէս ձեր սրտումը կը-րում էք խիղճ աւած բառը (բաւ լի-ցի) պատասխանեցէք կշտութեամբ այդ հարցերին: Վայ, թշուառական դու որ ի գուր զարմանում ես ծիծաղելի այդ խօս-քերով քո գործած մի շարք կեղտերը: Փաստերի հիման վրա առած անբա-տանութիւնը դարձեալ զրպարտութիւն կը կոչես դու պարոն:

Սե հաստատ հաւատացած եղէք որ մենք մեր ձեռքում ունենք բաւականի պերճախօս փաստեր զոգուածներ որոնք հիմնովին կապալցուցանեն ձ'ր կեղծ լինելը: Ո'ր աստիճան լրբութիւն որ աս-տիճան անամօթութիւն, աներեսութիւն, կեղծութեան մէջ մինչև վերջը խրախու-յետոյ յանդգնութիւնն ունենալ դուրս գալ նսրէն ասպարէզ և գոռալ թէ թշնամիների ջախջախած եմ:

Իրաւունք ունին այդպէս բղաւելու այն երբ ազգային ու հասարակական գործչի դիմակի տակ թագնուած կը կա-նես հասարակական տասնեակ հարիւր թուան փողերը և դիմացդ էլ հօ ոչ մի հակառակորդ բողբոջ ու պահանջող չես տեսել:

Քանի որ ասիթը դու ինքդ տւի, բողբոջում ենք և պահանջում ձեզանից պատասխանել հետեալ հարցերին:

- 1) Ի՞նչ նպատակով գնացիք Եւրոպա:
- 2) Քանի հոգու ստորագրութիւնը տա-րաք ձեզ հետ,
- 3) Ի՞նչ եղաւ Պարսկաստանի համարեա թէ բոլոր քաղաքներից ու գաւառ-ներից բարեգործական նպատակով հան գանակւած ու ապա ձեզ ուղարկած տա-նեակ հարիւր թուանները: Զեռքդ դիր

խղճիք վրա (և յանուն գաղափարի պա-տոսի սնիր այդ հարցին):

Միլլոյ Մեկ'ը Սոլեադեանց

ՆԱԽԻՆ ԼՈՒՐԵՐ

Յաւ րվա 13/30 (շաբաթ օր) երեկոյեան Հայկազեան դպրոցի թատերական սրա-հումը տեղի պիտի ունենայ մի խումբ սիրողների ձեռնակած թատերական երեկոյթը որն ինչպէս լսում ենք կ'ըմպերպուել է շատ հմուտ կերպով որը բաղկանում է քանի ազգային ինչպէս նաև զուարճալի քառաձայնեան խմբա-կան երգերից, մի քանի դիւթներէց կար-տասանին բանաստեղծութիւններ ու կը ներկայացին կ'նշանի պատկերներ ինչպէս նաև 200000 զարմալի և հե-տաքերէի «վաղիվիլը» գայ ինչպէս լսում ենք, որահի փոքրութեան պատճառով և ժողովրդի մի մասը հետ սքրքրելի տեսա-բանք չը զրկելու համար վճռել է ներ-կայաւումը, նոյն ծրագրով և անփոփոխ կերպով կրկնել: 18-ի ներկայացման յա-ջորդող շաբաթաւ (այսինքն լուսն. 25-ի (ն. տ) երեկոյեան և որ երկու գիշեր-ւան լը մոտքը կը լինի դերամատչելի:

Ինչպէս լսում ենք ամսույ 7/19-ին քաղա-քիս Հասարակագր թաղի պարսիկները քաջպերած լինելով անցեալ շաբաթւան հայ և պարսիկների մէջ պատահած ա-հագին կռիւից լետոյ անպատիժ մնալուց այս անգամ (այն թաղում) մի հայ կին են ծեծել, այդ էլ եղել է նոյն երկու խռովարար պարսիկների թելադրութեամբ-բը, որոնք անցած ընդհարման տեսն հաղարաւոր փայտեր փողոցը թափելով հաւատացեալ մասուլմաններին հրաւի-րու էին հայերին կոտորել, և որոնց մասին ինչպէս լսեցինք, հայերի կողմիցը հայլ Այվազեանին դիմում է եղել որը խօստացել էր կառավարութեանը դիմելով յիշեալ խռովարարներին այդ թաղիցը արտաքսել տալ բայց ով տեսաւ կամ լսեց այդ խօստման կատարումը մենք խոր-հուլէ կը տանք հայր Այվազեանին այդ-պէս դիմումներից շատ չանի կառավա-րութեան մօտ քանի որ այսուկետ շատ հաւանական է որ հայ կանալք իրենց պատուը աւելի ապահովելու հայր Սուր-բին էլ շատ անհանգստութիւն չը պատ-ճառելու համար, բնաւ տունից դուրս չը գոն:

Նոյն Զուղայից մեզ գրում են որ այն տեղի Ազգային դպրոցները պարոնայք Յ. Յարաւանճեանցի և Յարութիւնեանց-ները ջերմ գործունէութեան շնորհիւ բաւական բարեփոխւել և առաջացել են, իսկ ը' թերցարան-գրատարանը խիստ թուլ վիճակի մէջ է, որը մտածում են տեղափոխել Կեդրոնական դպրոցը, նոյն-ի՞նչ գրում են՝ որ յօգուտ նոյն վարժա-րանին վերջերս երկու անգամ թատերա-կան ներկայացում է տեղի ունեցել, և բաւական լաջող է անցել: Մենք մե-կողմից փափակում ենք այս առաջա-դիմակտն երեւոյթը:

Մի քանի հոգի օտարական երիտո-տարդ պատրաստութիւն են տեսնում որ մօտերս մի ներկայացում տան: Ներկա-յացման լաջողել էլք ս'անալը առ. Լեւոն-պէս կախած է մի երկու հոգի աղանե-րից, ուստի լոյս ունեց. որ նրանք էլ չեն մերժիլ իրենց աջակցութիւնը այս բա-նապատակ դործն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՏԸ (Մեր սեփական թղթակցից)

Ս. Պետերբուրգում հրատարակող Գերմանական «Neue Revue» թերթի մէջ, կար մի բաւականի լուրջ, գիտա-կան լօգւած, հայոց ազգի մինչ այժմ գո-յութեան, սկզբնական պատճառների մա-սին լօգւածը հայ գրչի արդիւնք է երեւում թէ և ստորագրուած է Nom de plume-ով:

«The Statist» ֆինանսական թերթի վերջի համարից երեւում է որ Թիւրքիան ֆինանսական տաղանայի մէջ, Sir Vin-queur-ի կազմած ստատիստիկայից երեւում էր, Թիւրքիայի պարտքը, վերջերումս աւելացել է 128—129 թուրքական ոսկու, այդ դէպքում Թիւրքիան ինչ պիտի անէ ի մոտ է ֆինանսիստնե-րին լուծելու առ այժմ այդ մի հարց է: Տեղւոյ Angle Armenian ը' կերո թիւ-նը գարկադրել է Պաւլարական կառա-վարութեան հետ, առաջիմ այնտեղ ա-պաստանելու համար, գաղթական փա-խստական հայերին. այդ առթով ան-ցեալ օրը ընկերութեան գանձարանից 1000 անգ. ոսկի տրանսմիտ արեց այն-տեղի ընկերութեան ագէնտին:

Ընկերութիւնը զգուշութեամբ հաւա-քած տեղեկութիւններից երևում է որ, մօտաւորապէս 100,000 անգ. ոսկի է հարկաւոր նիւթ կանապէս ապահովեց: նեւու Տաճկաստանի հայերի վիճակը այս ձեռնաւ չի համար:

Այստեղ էլ երկու տներ են պատրաստ-ւել որտեղ և ապաստարան են գրտ-նում մօտաւորապէս 100-ի չափ հայեր:

Lady Henoy Soncset-ը որի հետ և ես յատկապէս տեսնեցայ, ցանկանում է բոլոր անգլօ հայկական ը' կերո թիւնե-րի մի ֆիտիբացիա կազմել, տաճկահայեր-վիճակը, նիւթականապէս աւելի ապա-հովեցնելու, տիկինը շատ հայասէր է նա հրապարակախօս է կանանց հարցի մասին նոյնպէս և նախագահ է տեղւոյ Womens National Temperance Uniou-ի Տիկինը, այստեղի նշանաւոր հայկական լեկցիանների մէջ միշտ առաջինն է եղել և նա էր որ միջամտեց Ամերիկեան կա-ռավարութեան հետ, փախստականներին տեղափոխելու համար:

Անցեալ օրը հրաւիրւած էի տեղւոյ «Society of Science, Art & literatiwe» որտեղ և խօսելով, նկատեցի Անգլիայի քաղաքական պատասխանատուութիւնը, հայոց հարցի վերաբերմամբ, և նկատեցի հարաւային Աֆրիկայի սկանդալը որը միջամտում է մեր հարցի լուծման հետ, նկատեցի նոյնպէս և այն սկանդալների մասին, որոնք տեղի ունեցան պարլամեն-տում, հարաւային Աֆրիկայի հարցի

առթով և որոնք այնքան ծանրացին, մեր հարցի քաղաքական գրութիւնը, նկատողութեան համաձայնութեամբ ընդունեցաւ ներկայ եղողներէն, բնկերութեանակազմիստ անգամուհիներէն երկուսը ջուլթակով նազեցին «Մեր Հայրենիք թշուառ անտէր»-ը (իմ սովորեցրած) որը և լաւ ազդեցութիւն թողեց (երաժշտական տեսակէտից) ընկերութեան անդամներին և անգամուհիներին վրայ, ես յայտնեցի վերջում տեղոյս, փոքրամասն, ուսանողիքի կողմից, շնորհակալութիւնը, որը և ընդունեցաւ ընդհանուր ծափահարութեամբ, անգամուհիներից մէկը յանկարծ զիտթած կոչեց «Vive la Perse» որը և բաւականի ծիծաղ պատճառեց:

«Pearson Magazine»-ում մի լաւ յօդած կար Պարսկաստանի մասին, բայց պէտք է խոստովանեմ որ պ. յօդածագիրը օգուտ էր քողել փրօֆէսոր J. de Mouzou-ի «Mission Scientifique en Perse» գրքի երկրորդ հատորից, մի ուրիշ յօդած էլ կար «Contemporary Review»-ի մէջ Sir Francis hascelles-ի գրչից, որը պաշտօն է վարել Թէհրանում իբրեւ Անգլիական դեսպան, պարոնը բաւականի յուրը կերպով, դուրս է բերում պարսկաստանցիներին, քաղաքական, հայեացքները և այլն մի խօսքով, քարեկտիրիստիկը:

Վերջերում Պարսկաստանն էլ բաւականի նիւթ է մատակարարում տեղոյս, հետաքրքիր ժողովրդական թերթերին ցաւում եմ յայտնելու, որ տեղոյս հայերն էլ թէև փոքրթիւ, միմեանց միս են ուտում կուսակցական չնչին խնդիրների մասին, այնպէս որ Անգլիական մի քանի թերթերը իսկ մատնացոյց են անում այդ:

Հայերն այստեղ էլ ունեն մի փոքր գրադարան—ընթերցարան, որտեղ բացի «Շաւիղից» ուրիշ թերթեր են ստանում չը գիտեմ Շաւիղը ինչ է արել զրանց, նկարագրողները թող բարեհաճեն ուղարկել մի օրինակ այստեղ: Ահաւասիկ համառօտաբար և աճապարանօք գրեցի Շաւիղի յարգելի ընթերցողներին, հայկական հարցի այժմայն գրութիւնը: Յոյս ունեմ այս ու հետ խոստումս պահելու, և ծանաթացնելու սիրելի ընթերցողներին, մի շարք հարցերի հետ, որոնք յատկապէս կապակցութիւն կունենան հայերի ներկայ վիճակի հետ, աւելի կենսական տեսակէտից առ այժմ ուսքան:

Յովել Տէր Մովսեսեան

Լոնդոն գեկտ. 1/9 95

ՉԱՍՆ ԻԻՂ

Ձկան իւղը հին մամանտիներէ ի վեր գործածող մարմին մը ըլլալուն, ճիշտ թաւականը չի գիտցւիր, բայց սա միայն յայտնի է թէ, նախ Նովիկոյ, Գերմանիոյ Հոլանդալի մէջ յօգացաւ իբր մեակ տղու գեղ կը գործածուէր, իսկ 1770 թւականէն ի վեր է որ դրեթէ ամբողջ աշխարհի ծանօթ մարմին մը եղաւ, ձկան իւղը մօրիւ անւամբ ձկան լեւորէն կէլէէ այս կենդանիները մէկ ու կէս մէթրօ լրկանութեամբ և 10 12

քիլոյ ծննդութեամբ ընդհանրապէս կը գտնուին Նորվիկիոյ արևմտեան և Թէնէօվի հիւսիսային եզերքները, ասոնք իրենց յատուկ եղանակին մէջ զարմանալի քանակութեամբ կը շատանայ այնպէս որ, մինչև իսկ ջուրին երեսէ կէտէ և դանոնք որոշու համար մեծ դժուարութիւն մը չը կայ, այս հուկը որտալէ վերջ, մասնաւոր գործարաններու մէջ փոխադրուելով կը կտրուին և լեւորէնը մէկ կողմը կառնուին, թէպէտ և միւսը յարգի չէ բայց ազգատ գիւղացիներու առօրեայ սնունդը կը կրգմէ և մարմնոյն ալ և ալ մասերէն երաժ կտրծը եւզերէն մօմ կը պատրաստեն, իսկ հաւաքած լեւորէնը լաւ մը լուալէ վերջ, մանր մանր ջարդելով, յառկապէս շինուած աւազանի մը մէջ կը լեցնեն սրան յատկը անթիւ ծակեր պօրուհակելով, ալտաքսուած իւղը աւելի ցածը գտնուած ուրիշ աւազանի մը մէջ կը լեցնեն, որուն յատկը անթիւ ծակեր պարունակելով, արաւաւած իւղը աւելի ցածը գտնուած ուրիշ աւազանի մը մէջ կը վազէ, ուսկից ծրարի մը միջոցաւ տաւալներուն մէջ կը լեցուին, այս առաջին աղբաւ ելած իւղն գոյնը ճեմակ և համը համը թեթեւ է, լետոյ ևւացեալ կտորանքները միքենաներու իջոցաւ թեթեւակի կը շնչուին, ուսկից ակեզոյն իւղ մը լաւաջ կուգայ, իսկ ճշում աւելցնելով բոլորովին կարմիր լւղ մը կունենանք, լետոյ նոյն կտորանքները սաստիկ ճնշելով և կամ ջուրի հետ խաշելով կունենանք սև աղտոտ իւղ մը սվ գրէթէ աճառ պատրաստելու և կամ մեքենաներ, կոշիկներ իւղոտելու միայն ը գործածուի, այս տարբեր պատրաստութիւններէ վերջ կունենանաքուրեմն չորս տեսակ իւղ, այսինքն ճերմակ, դեղին տեղին տեսակն է, թէ պէտի ոմանք ճերմակին համար կը պնդեն, յայց քիմիագէտէնէ շատերը հաստատաճ են թէ այս երկու իւղը իրարմէ գրէթէ տարբեր բաղադրութիւն մը չունենալէ գտ, ճերմակ իւղը շուտով լեղինալու անպատեհութիւնն ալ ունի, բայց սա միայն անուրանալի է թէ համը համը թեթեւ լլալուն համար շատ գիւրաւ կը խմուի, իսկ կարմիր իւղը, որ իր բաղադրութեան մէջ լեղիղ նիւթեր (մանաւանդ արլուն) պարունակելուն համար գոյնաւոր դժուարալարս և տնախորժ հանգամանք մը ունենալով, բժշկական աշխարհին մէջ անգործութեան գատապարտուած է, բայց ժողովրդին մէջ զարմանալի գտաւոր մը կայ թէ կարմիր իւղը ամենէն ուժով և ամենէն աղբեցիկը եղած ըլլար, չի գիտցուի թէ այդ տարօրինակ գաղափարը ուսկից ծագում առած է:

Կարապետ Բաբարիան

Վերջին Տեղեկութիւններ

«Nord» Լրագիրը նորից կրկնում է, որ Նելիգովի Կ. Պօլիս վերադառնալուց լետոյ արևելեան հարցը մտել է նոր ֆազիսի մէջ, որը կարելի է անունել գործողութեան Բ. Դրան վրայ եռանդու ճնշում գործ դնելու ֆոզիս, Նիւէ Բ.

Դուռը անկեղծօրէն կնդուանի Բ.Ֆօրմաների ծրագիրը որը նրան առաջարկուն մեծ պետութիւնների դեսպանների կողմից այն ժամանակ այս պետութիւնները դուրս չեն գալ գիւղամասի տկան սահմաններէ: Ա. Գալստի վրայ էլ ի. Դուռը կը փրկէ անան կայսրութիւնը այն բարգաւթիւնը, որոնք կարող են վրտանգաւոր լինել ընդհանուր խաղաղութեան:

Կ. Պօլիս 11 դեկտեմբերի: Դեկտեմբերի 10-ին հրատարակեց սուլթանի իրագէտ որով հայերին ընդհանուրներում է շնորհվում բացառութեամբ միայն մահվան պատժին դատապարտված 84 հոգուն Այդ անձինք կենթարկվեն աքսորի Խոսքերի եպիսկոպոսները, որոնք աքսոր կուղարկվեն Երուսաղեմի վանքը:

Կ. Պօլիս 12 դեկտեմբերի Հայերին ներումն շնորհելու ազգաբարձութեան մէջ, ոչի հետ հրատարակված է և հայոց պատերաքի միջնորդութիւնը ներումն շնորհելու մասին ամսածէ է որ հայերը տեղեկութիւններ չունին հայկական կոմիտէի գիտաութիւնների մասին, և մոլորութեան մէջ ըլկած: Պատրիարքի տաւ երաշխաւորութիւնների հիման վրայ միսիոնաների խորհուրդը առաջարկեց ներումն շնորհել որը հաստատեց սուլթանը: Ներումն է շնորհված լետեալ պայմաններով. ներումն ըստայած անձերից կառնուի հաւատարիմ հպատակութեան երգումն պատրիարքը և միջնորդները Խոսքերը երաշխաւորում են, որ հայերը սրանից լետոյ իրենց հաճախ կը պահեն ներումն ընդունածները կը մնան ոստիկանական հսկողութեան տաճ բացի երեքից, որոնք դատապարտած են մահաւան պատժի նրանք աքսորի մէջ կը մնան և կտրող են պաշտպակ իրենց արհեստներով: Ներումն շնորհելու ազգաբարձութեան մէջ ամսած է որ ներում է շնորհվում և այն մահաւաններին որոնք դատապարտված են խառնակութիւններին մասնակցելու համար:

Կ. Պօլիս 13 դեկտեմբերի: Այն սուլաւորութիւնը, որ թողեց ներումն շնորհելը, թուլացաւ երանով սը նեկման վերաբերեալ հրամանի պայման է զրւած հայոց կոմիտէի արձակուելը միջնորդապատրիարքը խօստացել է միայն այն որ ջանք գործ կը դնի որպէս զի կօմիտետը արձակվի:

Արտասահման հեռացած հայերին նորերկու շաբաթամասնակ է տրւած Թիւրքիա վերադառնելու համար:

Լօ՛ճոն 25 դեկտեմբերի: «Թէմ» լրագրին հաղորդում են Կ. Պօլիսից թէ թիւրքիաց արտաքին գործերի մինիստրը տեղեկացրեց դեսպանների թարգմաններին սը դեռ ևս բանտերում գտնուող բոլոր հայերին վաղը ազատութիւն կը տրվի:

Բ Ա Ն Ա Ս Ի Դ Ա Կ Ա Ն

ԴՊՈՐՑԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԹԱԻՐԻՑՈՒՄ

Հոգաբարձութիւնը, կթէ անկեղծ մտքերով

առաջնորդէր ամենայն տարւայ վնըը կը խորհրդակցէր ուսուցչական խմբի և նոցա նախկայացուցիչներին հետ ծանօթ խմբու դպրոցի բերութիւններին և առաւելութիւններին հետ միմիջոց կը մտածէր բարոյական համար: Սակայն հոգաբարձութիւնը կը ք չի հնարքը պայքարի, գրքերով, ամսագրով 189 թ. ա. հաշտութեան ժամանակ (աքսի) երբ մենք մտնացոյց էինք անում դպրոցի բերութիւնների վրայ և միջոցներ առաջարկում պ. Ա. փանուկանցը ակտի վերջին եկաւ, որով հետև դաւաւած էր այլապի հիւրըրով... վեց ջապէս որը ասինք և որը թարնեք. դա՛ մի խայտառակ պատմութիւն է, որ կարծում ենք միմիայն թաւրէղումն է սեղի ունենում:

Իսկ այժմ կառաջարկներ մեր լրագրը: Տարրական դպրոցների թիւը պէտք է շատացնել և ոչ թէ բացնել. այդ հիման վրայ հարկաւոր է թէ Բերդաթայում և թէ Լիլաւայում թողնեն 2 դասան, կամ առաւել մի տասնան դպրոցներ: Քաղաքի միջոցում հիմնել մի բարձրագոյն կենդրոնական թեմական դպրոց սկսած 3-րդ կամ 2-րդ դասարանիդ: Օրիորդաց դպրոցները թողնել ամեն մի թաղին առանձին իւր տեղը, տարեց տարի աշխտակով բացել նոր դասարաններ: Հոգաբարձութիւնը և ուսուցչական խմբեր ամեն մի թաղի և կենդրոնական դպրոցի ինիկն դատ դատ, այդպիսով աշխատանքները բաժանուած լինելով յաւաճ կը գար ագնի մրցութիւն, կթէ առաջնորդը անաշառ մարդ լինի: Ապագայում ժողովուրդը պիտի պաշտանայ և հոգաբարձական կազմի մէջ չը մտցնի այնպիսի մարդիկ, որոնք իրենք չանհաւատարմութիւնները:

Կանութեան դո՛ են բերում հասարակական հիմնարկութիւնները և ունենալով իրանց ձեռքին այս կամ այն իշխանութիւնը լեցնում են ամենքին բուռնքին, ոյժի միջոցով... եկամուտների միացման կարիք չը կայ, որովհետև մի տեղ Քաղաքաւորութիւնը կարող է ծուլանալ և գործ չը կատարելով ուրիշի աշխատանքը վայելի, սակայն պէտք է պարտաւորացնել թէ Լիլաւայի և թէ Բերդաթայի հոգաբարձութեան որոշ տուրք տալ Կենտրոնական դպրոցը պահպանութեան համար: Օրիորդաց դպրոցները կարելի է յանձնել 2 կանանց ընկերութիւններին: Գոնէ Լիլաւայի օրիորդաց դպրոցը նոյն թաղի կանանց ընկերութիւնը այս տարւանից իսկ կտրող էր պահել և անհամեմատ բարւոք վիճակի մէջ. քան պահում է ներկայ հոգաբարձութիւնը: Ծրագրիները պէտք է մի լինի և հաստատուած Վիհափառ հայրապետից: հարկաւոր է մեղկել մի ծրարագիր որոշելով ուսուցչաց, տեսչի հոգաբարձաց և Առաջնորդի իրաւունքները և պարտականութիւնները կրկին հաստատուած Վիհափառ հայրապետից, որպէս զի վերջ տրուի կամայականութիւններին: Մինչև որ պարսկաստանի դպրոցները չեն աւանդալ մի ոթոճ ծրագիր թէ ուսման, թէ դպրոցի, թէ վարչական մարմինների վերաբերմամբ, կրթը դպրոցական գործը յառաջդիմութիւն չի անել: Այդ առթիւ խնդրում ենք Վիհափառ հայրապետի աշակալը ուղարկութիւնը: *)

Գ. Պապիանց

* Զուիղը շատ անգամ է խօսել այդ ծրագրի մասին և էջմիածինը էլ խօստացել է տալայդ ծրագիրը, բայց միայն այսօր էլ իր խօստումը չի կատարել: Երկի շամփանիկները չի վերջացել: *) Խնդրելու պէտք չը կար առանց այն էլ զիշեր և ցիւրեկ աշխատում է: Ելդբան էլ ամենքին:

Երբո՞ւ անէր հրատարակիչ

ԸՆԴԻՐԵՍ ԲԵԿԵՆՉՈՐԵՆ